Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

,Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովումե ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Թեմա՝ Սովորողների մոտ արժեհամակարգի ձրավորումը տարրական դասարանում դասավանդվող ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Ռոզա Սանամյան

2023

Բովանդակություն

1. Ներածություն
2. Արժեքային համակարգի ձևավորման ուսումնասիրությունը և ընդհանուր բնութագիրը
3. Արժեքային համակարգի ձևավորումն ուսումնական գործընթացում
4. Եզրակացություն և առաջարկություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Արդի ժամանակաշրջանում լայն քննարկման են դրվում երեխաների մեջ բարոյական արժեքների

ձևավորման խնդիրները: Երեխաների բարոյական դաստիարակությունը հետագայում հասարակության մեջ արժանի քաղաքացիներ ունենալու անհրաժեշտ և կարևոր պայման է:

Հասարակության կայուն զարգացումը մի շարք գործոնների հետ միասին մեծապես կախված է սերնդի քաղաքացիական կրթութունից:Այն ուղղված է համամարդկային և ազգային գերակա արժեքների փոխանցմանը,պետական մտածողության և քաղաքացիական դիրքորոշման ձևաորմանը,և դրանով էլ կարևորում և շեշտադրում է իր երկիրը սիրող,երկրին նվիրված ,պատասխանատու և արժանապատիվ ազնավորության կայացման խնդիրը:Արժանապատիվ քաղաքացի դաստիարակելու գործընթացը սկսվում է վաղ տարիքից և շաղկապվում է երեխայի սոցիալական զարգացմանը:

Հասարակության վաղվա օրը պայմանավորված է լինելու ոչ այնքան յուրաքանչյուրիս իմացական ունակություններով,որքան միմյանց լսելու , համագործակցելու հօգուտ ընդհանուրի մտածելու ցանկության ու կարողություններով:

Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական ձևերի և մեթոդների վերանայում,կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Հարց է ծագում.,Իսկ ի՞նչը կարող է անձի բարոյական ձևավորման առանցք դառնալե:,Ե՞րբ պետք է սկսել նպատակամետ աշխատանքներըե:,Ի՞նչպիսի արժեքներ և արժեքային համակարգեր են անհրաժեշտ մարդկանց՝ հասարակության մեջ ներդաշնակ ապրելու համարե:,Ինչպիսի՞ն են դրանք կրթության ոլորտումե:,Ի՞նչ մեթոդներ ու հնարներ են հարկավոր բարոյական դաստիարակություն իրականացնելու համարե: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ են դառնում:

Հետազոտության հիմնական **նպատակն** է ձևավորել, զարգացնել, խթանել արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ

հանրակրթական դպրոցներում: Արդի մանկավարժության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկնիշներ ձևավորելը:

Հետազոտության խնդիրները՝

1. Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը
2. Պարզաբանել արժեհամակարգի դերը տարրական դասարաններում ուսումնասիրվող ուսումնական առարկաների դասաժամերին
3. Ուսումնասիրել երեխայի սոցիալական զարգացմանը նպաստող մանկավարժական մոտեցումներ

Արժեքային համակարգի ձևավորման ուսումնասիրությունը և ընդհանուր բնութագիրը

Արժեահամակարգը մարդու բարոյական , գեղագիտական , հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է,որն անհրաժեշտ է անձի բազմակողմանի ձևավորման,զարգացման համար: Դրանցից որևէ մեկին գերապատվություն չպետք է տալ,դա չի լինի խնդրին մանկավարժական մոտեցում:Արժեհամակարգը ավարտուն է և լիակատար բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեահամակարգի ձևավորման համար կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Տարրական դասարաններում,այնուամենայնիվ,արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է ,Մայրենիե առարկայի դերը:

Վաղ մանկությունից բարոյական որակների վերաբերյալ երեխաների իրազեկումը և այդ ուղղությամբ հետևողական աշխատանքներ տանելը կարող է տալ շոշափելի արդյունք:Նրանց մեջ սերմանել,որ բարոյական արժեքներ են հավատարմությունը,սերը մարդկանց և հայրենիքի նկատմամբ:Երեխայի մեջ դրանց գիտակցումը արմատավորելու համար

անհրաժեշտ է նրան գաղափար ներշնչել այնպիսի որակների մասին,ինչպիսիք են ՝ բարությունը,բարի գործեր կատարելու ձգտումը,շրջապատի նկատմամբ համբերատար լինելը,թերությունների և թույլ տված սխալների համար ներողություն խնդրելու , ինչպես նաև ներելու ընդունակությունը:Նրանք պետք է կարողանան չարը չարով չպատասխանել:Մարդասիրություն,ազնվություն,ճշտապահություն, հարգանք անձի նկատմամբ պատասխանատվություն արված որոշումների համար,անձնական թերությունները տեսնելու կարողություն,հոգատարություն և խնամք հարազատների ու մտերիմների հանդեպ,լսել կարողանալու ունակություն,աշխատասիրություն,ուրիշի աշխատանքին հարգանքով վերաբերվելու հակում, սեփական աշխատանքով ուրիշին ուրախություն պարգևելու ցանկություն, ամաչկոտություն, լսել ,խղճի ձայնը ՝ այս հասկացությունները պետք է հասկանալի և մատչելի դառնան երեխաների համար,որն էլ կձևավորի նրանց արժեհամակարգը:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային,մշակութային , կրթական ,ժողովրդագրական ,ընտանեկան ,սոցիալական , հասարակական և այլն:Հաշվի առնելով բազմաթիվ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում երեխաների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության և մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:Աշակերտը, կրելով նշված և այլ հանգամանքների ներգործությունը,յուրացնելով դրանց ազդեցությունը՝ հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ:Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և

հարաբերությունն աշխարհի հետ,վերաբերմունքն իր անձի նկատմամբ ,հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են ուսումնական հաստատությունների ,հասարակական ,պետական, խորհրդակցական մարմինների,տեղեկատվական տեխնոլոգիաների ՝ հեռուստացույցի ,համացանցային լրատվական միջոցների , մամուլի միջոցով:Կինոն,թատրոնը , համացանցը, հեռուստատեսությունը ներգործում են անձի վրա ոչ միայն որպես տեղեկատվական միջոցներ , այլ նաև որոշակի տիպարների միջոցով ,որոնք դրսևորում են այդ

,տեղեկատվական աղբյուրներից հոսողե հերոսների վարքագծում:Աշակերտները իրենց տարիքային և անհատական առաձնահատկություններին համապատասխան , հակված են իրենց նույնացնել այս կամ այն հերոսի հետ ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը,հագուստը ,կենցաղը և այլն:

Հայտնի է , թե երեխայի համար ընտանիքն ինչ կարևոր դեր է կատարում հոգեբանական և անձնային դաստիարակության առումով:Հենց ընտանիքում են ընդօրինակում և տարբեր իրավիճակներում մշակվում բարոյական արժեքների չափանիշները երեխայի կողմից: Հիմանականում ընդօրինակումները կատարվում են ենթագիտակցաբար:Դրանց հենց այն գործընթացներն են , որոնք հայտնի էկոլոգ Լորենցն անվանել է , Իմպրիտինգե, որը թարգամանաբար նշանակում է , օրինակի տպավորությունե: Այսինքն ՝ սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից մեկն էլ միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ,ուսուցիչներ,ընկերներ,մեծահասկաներ):Այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները ,դասղեկը ,ուսուցիչը , տնօրենը և այլն:Աշակերտը նրանցից կարող է ստանալ ինչպես դրական,այնպես էլ նաև բացասական կերպարներ:Բացասականը ավելի

արագ է ձևավորվում և անդառնալի բացսական ազդեցություն կարող է ունենալ երեխայի արժեքային ճիշտ դաստիարակության վրա:

Աշակերտի արժեքների ձևավորման գործոններից մեկն էլ տարիքային է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են ՝ ըստ տարիքային առանձնահատկությունների:Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ուշփման հարաբերությունների որոշակի մակարդակում ՝ խոսքում,արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկանելու ձևում,ապրելակերպում և այլն: Սակայն այստեղ կարևորը մանկավարժների կողմից աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքին ,ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է:

Չեմ կարող չնշել մի ցավոտ հարցի մասին,որն անընդհատ արծարծվում է. ներառական կրթության կարիք ունեցող երեխաների մասին:Երբ աուտիզմ ունեցող երեխային չեն վերցնում դպրոցական էքսկուրսիաներին, երբ Դաունի համախտանիշով երեխային դուրս են անում պարի խմբակից, իսկ մանկական ուղեղային կաթվածով երեխային քշում են մանկական խաղահրապարակից,որովհետև նա չի կարողանում վազել մյուս երեխաների նման, մանկավարժներս շատ անելիքներ ունենք թե՛ աշակերտների,և , ինչու՞ չէ , նաև ծնողների շրջանում:Միշտ կան տղաներ և աղջիկներ , որոնց երբեք չեն հրավիրում ծննդյան տոներին:Կան երեխաներ, որոնք կանգնած են մնում ֆիզկուլտ դահլիճում,որովհետև նրանց ոչ ոք չ վերցնում իր թիմ, քանի որ առավել կարևոր է հաղթել, քան տալ նման երեխաների մասնակցության հնարավորություն:

Մանկավարժները պետք է հասնեն նրան,որ մարդիկ ,նույն տարիքի երեխաներ դպրոցներում, փողոցներում , այգիներում ժպտան այդ երեխաներին, հրավիրեն խաղալու:Սովորեցնեն երեխաներին հարգել դասընկերներին հավասարապես , ուղղակի ընդունեն նրանց :Չէ՞ որ արդի

մանկավարժության նպատակը ոչ միայն անհատին գիտելիքներով զինելն է , այև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:

Արժեքների ձևավորման ուսումնասիրության մեջ իր ուրույն տեղն ունի Մ.Մեսսեյը: Հեղինակը կարծում է , որ մարդու արժեհամակարգը ձևավորվում է մի քանի փուլերի ընթացքում:

1ին փուլ- Դրոշմի: Այս փուլն ընդգրկում է երեխայի ՝ մինչև 7 տարեկան դառնալը: Ըստ Մեսսեյի՝ երեխաներն այս փուլում նման են ,սպունգիե , կլանում են այն ամենը , ինչը տեղի է ունենում իրենց շրջապատում և ընդունում են գրեթե ամեն ինչ որպես բացարձակ ճշմարտություն , հատկապես ,եթե դա փոխանցում են ծնողները:

2-**րդ փուլ- Կրկնօրինակման:** Այս փուլը ընդգրկում է 8-ից 13 տարեկան հասակը : Այս փուլեւմ երեխաները ընդօրինակում են իրենց ծնողներին, ուսուցիչներին , դասընկերներին , շրջապատող մարդկանց:

3-րդ փուլ- Սոցիալականացման:Այս փուլը տևում է 13 տարեկանից մինչև 21 տարեկան:Այս փուլում երեխաների համար շատ կարևոր է իրենց հասկակակիցների կարծիքը և կրում են նրանց ուղիղ ազդեցությունը իրենց վրա:Արժեքների ձևավորման այս փուլում շատ մեծ ազդեցություն ունեն հուզական իրադարձությունները :

Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի համար, բայց բացարձակ անկարևոր մյուսի համար:

Ըստ Շվարցի՝ առանձնացվում են արժեքների հետևյալ հատկանիշները.

1) Արժեքները համոզմունքներ են: Մարդիկ , որոնց համար անկախությունը կարևոր արժեք է, անհանգստանում են , երբ այ վտանգվում է, հուսահատվում են, երբ անկարող են լինում պաշտպանելու,երջանիկ են ,երբ կարող են վայելել այն:

2) Արժեքները կապված են ցանկալի նպատակների հետ, որոնք մոտիվացնում են մարդուն՝ կատարելու որոշակի գործողություններ:

3) Արժեքները լայն ու ընդգրկուն հասկացություններ են : Այս հատկանիշը տարբերակում է արժեքներն ավելի նեղ հասկացություններից , ինչպիսիք են

նորմերը , մոտեցումները , որոնք վերաբերում են կոնկրետ գործողությունների ,իրավիճակների:

4) Արժեքները ծառայում են որպես սկզբունքներ կամ չափանիշներ:Արժեքներ ուղղորդում են մարդկանց որոշակի գործողությունների: Մարդիկ որոշում են, թե ինչն է լավը ,ինչը՝ վատ:Արդարացնում կամ մեղավոր են ճանաչում , գործում կամ խուսափում են ՝ հենվելով իրենց համար թանկ արժեքների հնարավոր հաջորդականության վրա:

Մարդու գործողությունները ուղղորդվում են բազմաթիվ արժեքներով:Ցանկացած վարքագծի կամ վերաբերմունքի վրա ազդում են ոչ թե մեկ , այլ բազմաթիվ արժեքներ:

Արժեքներ կարող են համարվել.

1) Մտերիմները ,ընկերները , շփումը
2) Սերը, ընտանիքը, տունը , երեխաները
3) Առողջությունը
4) Ինքնակառավարումը աշխատանքի մեջ ,աշխատանքից հաճույք ստանալը
5) Նյութական բարեկեցությունը
6) Ստեղծագործական ինքնադրսևորումները
7) Ինքնկրթությունը

Կարող են լինել նաև այլ արժեքներ:Գոյություն ունեն , նյութական արժեքներե և , մնայուն արժեքներե: 21-րդ դարում մարդկանց համար նյութական արժեքներ են հեռախոսը,փողը,մեքենան, ապրելու վայրը, հարմարությունները և այլն:Հոգևոր արժեքներ են սերը , բարոյականությունը , հարգանքը , շրջապատը , ընկերները , ազատությունը:Մնայուն արժեքներ են մարդու կողմից ստեղծված պատմամշակութային կոթողները,հուշարձանները,եկեղեցիները և այլն:

Յուրաքանչյուր անհատի արժեքների գերակայութրոնը տարբեր է:Ուրեմն կարող ենք ասել,որ կախված հասրակության նորմերից ,մարդու շրջապատից և ընտանեկան կարգավիճակից, արժեքային համակարգը ցանկացած մարդու համար անհատական է և յուրովի:

Արժեքային համակարգի ձևավորումն ուսումնական գործընթացում

Ամբողջ կրթության գլխավոր խնդիրներից մեկը հատկապես կայանում է նրանում,որպեսզի նոր սերունդներին մշտապես ներգրավել մարդկության ընդհանուր գործի մեջ՝ դեպի բացարձակ բարօրությունը նրա անվերջանալի ձգտման մեջ:

Կ.Ուշինսկի

Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա՝ նա ձևավորում է մարդուն:

Մ.Կալինին

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափարաշչում ՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը,որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրություն,սեփական ժողովրդի պատմություն ,նրա ստեղծած մշակութային արժեքների,գիտական նվաճումների համար հպարտության զգացում:Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները , մասնավորապես՝ ռուսաց լեզուն,որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ:Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում Ռուսաց լեզվի դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսացանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական , բարոյական,հոգևոր արժեհամակարգը

ձևավորելու մի միջոցի:Ռուսաց լեզվի անհամրելի հարստությունները բացելով աշակերտների առջև՝ նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ:Եթե մեր հարևան երկրում ուսուցանվեր , որ հոգևոր մշակույթը ազգություն չի ճանաչում,նրանք չէին զբաղվի վանդալիզմով,չէին պղծի մեր եկեղեցիները , չէին ավերի այն ամենը, ինչը գեղեցիկ է ու նվիրական:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացվում են առարկայական ծրագրում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները,որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա,դասղեկի ժամ ,արտադասարանական միջոցառումներ) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց,միասին ձեռք բերել հաջողություններ ,միասին հաղթահարել դժվարությունները, լսել հակառակ կարծիքներ, ընդօրինակել միմյանց:Հասակակիցների միջավայրում աշակերտն ավելի ազատ է,անկաշկանդ արտահայտում է իր մտքերը:Անհատական աշխատանքում դաստիարակում է պատրաստակամությունը ,դժվարությունները մենակ հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման, ինքնավերահսկման, վտսահության ընդունակությունները: Հատկապես տարրական դասարաններում աշակերտների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը , հասուն երևալու ձգտումը մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն,հարգանք դեռահասի անձի

նկատմամբ:Ուսուցչի նվիրվածությունը երեխաներին և մանկավարժական վարպետությունը կօգնեն սովորողի արժեհամակարգի ձևավորմանը:Ուսուցիչը պետք է հասնի այն բանին,որ Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման ,անկախ պետականության կերտման ,հայրենիքի բարգավաճման և վերծնության գործում:Նպաստի մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:Խթանի սովորողի ճանաչողական ակտիվությունը ,մտածողության ինքնուրույնությունը,ինքնուրույն լրացնելու և հարստացնելու սեփական գիտելիքները:

Սովորեցնի տեղեկատվության աղբյուրներից օգտվելու ժամանակակից տեղեկատվական հեղեի մեջ կողմնորոշվելու անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու,մշակելու ,այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողությունները:

ՀՀ պետական չափորոշիչը նախատեսում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

. Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործում,կարևորի ազգային-պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում և կամք

. ունենալ ազգային ինքնագիտակցություն,կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը

. Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը:

. Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում

. գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտություն

. Գիտակցի,որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները , աշխատանքային հմտությունները և այլն:
Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները:
Աշակերտների մեջ արժեհամակարգ ձևավորվում է նաև ,երաժշտությանե ,,տեխնոլոգիայիե,,շախմատիե ,,մաթեմատիկայիե,,ֆիզկուլտուրայիե և մյուս առարկաների դասաժամերին:Երեխան ծանոթանում է հայ երգ-երաժշտության գոհարներին ,ինչու՞ չէ,նաև համաշխարհային գոհարներին:Երեխան երախտագիտությամբ ու հպարտությամբ է լցվում ծանոթանալով Կոմիտասի և Արամ Խաչատրյանի ստեղծագործություններին և հասարակական գործունեությանը:Ուզում է նմանվել շախմատի չեմպիոն Տիգրան Պետրոսյանին, օլիմպիական չեմպիոններ Ալբերտ Ազարյանին,Հրանտ Շահինյանին, Յուրի Վարդանյանին և այլն:
,Տեխնոլոգիաե առարկան ձևավորում է մշակութային ճաշակ, համագործակցելու կարողունակություն,աշխատասիրություն, գեղագիտական ճաշակ ,ազգային արժեքները ճանաչելու ,գնահատելու կարողություն:
Փորձենք հասկանալ ,թե ինչպես է ձևավորվում արժեքային համակարգը Մայրենիի դասաժամերին:Տարրական դասարանում Մայրենի առարկայում հայրենիքին ,ընտանիքին,մշակութային արժեքներին նվիրված յուրանչյուր դասանյութ գաղափար է տալիս հայ մշակույթի, քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին ծանոթացնում հայ ժողովրդի մշակութային արժեքներին,նվաճումների հետ,ցույց է տալիս հայ ժողովրդի խաղաղասիրությունը,աշխատասիրությունը,ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը,սերմանում է սեր և հարգանք աշխատանքի ,աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց

նկատմամբ:Դեռ մանկուց հայ ժողովրդի մասին իմանալը հնարավորություն է տալու իրականացնելու մեր ցանկությունները ,ձևավորելու և պահպանելու հենց թեմատիկ խմբի վերնագիրը՝ , Հայրենի՛ք, ես մի զարկն եմ քո բազկիե թեման պարտավորեցնում է երրորդ դասարանի աշակերտին ,որ ինքն էլ մի մասնիկն է իր հայրենիքի,որ ինքն էլ պետք է անելիք ունենա իր երկրի շենացման ու հզորացման գործում ,որ ինքն էլ լավ պետք է իմանա իր ժողովրդի անցած ուղին,ճանաչի և գնահատի իր ժողովրդի նշանավոր մարդկանց:Մեծություններ ,ինչպիսիք են Կոմիտասը ,Վիկտոր Համբարձումյանը ,Արամ Խաչատրյանը ,հպարտության զգացողություն պետք է առաջացնի սովորողների մոտ:Հայաստանի մասին չլսած ,չճանաչած մարդիկ այս մեծությունների միջոցով ճանաչում և սիրում են մեր հայրենիքը:

Առակներն ու հեքիաթները ուսուցանում են ,սովորեցնում են ,թե որն է ճիշտը ,որը՝ սխալ:Երեխաները գովաբանում,դրվատում են լավը,գեղեցիկը,քննադատում և դատապարտում են վատ արարքները:Նույնիսկ բացասական հերոսների միջոցով կարելի է լավ հատկանիշներ ձեռք բերել:Այստեղից էլ երեխան գիտակցում է ,թե հասարակությունը ինչն է ընդունում,ինչը՝ ոչ: Այստեղից էլ ձևավորվում է երեխայի արժեհամակարգը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից մանկավարժության մեջ տեղ են ունենում կտրուկ փոփոխություններ: Մենք ապրում ենք վարչարարական դաստիարակությունից հումանիստական մանկավարժության անցման շրջանում,երբ առավել բարձր է գնահատվում մարդը:Մարդ-անհատն ընկալվում է որպես բարդ ամբողջություն ներկայացնող և անկրկնելի գերագույն արժեք:

Ուսուցչի նպատակը պետք է լինի բացահայտելու և ներկայացնելու աշակերտների մեջ ձևավորված արժեքները:Դպրոցի նպատակը պետք է լինի կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ ,բարձր բարոյականության տեր ,իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունը:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը,ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ,նրա մտահորիզոնը հասարարական լայնախոհությունը,սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են:

Աշակերտները ,որոնք ստանում են բավականաչափ սեր տանը,գալիս են դպրոց սովորելու,իսկ նրանք,ովքեր չեն ստանում այն տանը, գալիս են դպրոց մի փոքր սեր ստանալու համար:

Նիկոլաս Ֆեռոնի

Դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նրանով,որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսի աշակերտների ոչ միայն մտավոր,այլև բարոյական ,գեղագիտական և ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ինչպես ասում են՝ երեխան ,երբ դպրոց է գալիս, նման է մաքուր ,սպիտակ թղթի:Մեզանից՝ մանկավարժներիցս է կախված,թէ ինչ կգրվի այդ թղթի վրա:

Արժեհամակարգի ձևավորման կարողունակություններն են ավելի շատ դրական խոսքի խթանի,դաստիարակչական զրույցի,ժողովրդավար օրինակի միջոցով են ձևավորվում ,խթանվում և զարգանում սովորողի մոտ:

Ուստի **առաջարկում** եմ օգտագործել հետևյալ քայլաշարը

1. Ծանոթանալ բնութագրիչների հետ
2. Վերլուծել ,կռահել ,պատկերացնել դրանք որտե՞ղ և ինչի՞ համար են անհրաժեշտ
3. Գտնել դասի ընթացքում դրան անդրադառնալու համար հատվածներ ,տեղեր
4. Մշակել այդ հատվածներում հարցեր,հարցադրումներ և դաստիարակչական ,ուսուցանող ,խրատական խոսք
5. Դասի պլանում արտացոլել դրանք

Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել մարդ կոչման հետ:

Հովի.Թումանյան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Սուխոմլինսկի Վ.Ա. Սիրտս նվիրում եմ երեխաներին,Երևան 1977թ

2.Առարկայական չափորոշիչներ. http://escs.am/am/search

3.Հանրակրթության պետական չափորոշիչ http://www.arlis.am/documentview

4.Ա.Գևորգյան.Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան 1977թ